ՀԱՅ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԵԶՐԵՐԸ

Ռ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ բանահյուսության հարուստ գանձարանում բացառիկ ինքնատիպ ու հետաքրքիր բաժին է մանկական բանահյուսությունը, որի կազմի մեջ մտնող ստեղծագործությունները ցրված էին տարաբնույթ՝ բանահյուսական, ազգագրական, տեղագրական, ինչպես նաև արխիվային ձեռագիր ժողովածուներում։ 1970 թ. այդ նյութերի համահավաք բնագրերը հրատարակվեցին «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր» ժողովածուով, որով և լույս աշխարհ հանվեց ավելի քան մեկ հարյուրամյակում կուտակված բանահյուսական արժեքավոր նյութը՝ իր տարատեսակ փոփոխակներով, հանգամանք, որը հավաստեց մեր ժողովրդի կյանքում նրա կիրառական ակտիվ գործընթացը և ապա հայ բանահավաքների ջանադիր աշխատանքը։

Հայ բանահյուսության ընդհանուր համակարգի հետ նրա ունեցած ընդհանրություններն ու նմանությունները, ինչպես նաև կրկնությունները չեն կարող դրանց նույնացման հիմք ծառայել, քանի որ մանկարվեստն ունի իր առանձնակի կիրառական միջավայրը և օժտված է կատարման ձևի ինքնատիպությամբ։ Ժողովրդական բանարվեստի այս բնագավառի հարատևությունը պայմանավորված է նրա առանցքը կազմող առարկայի ու խնդիրների (ծնունդ, երեխա, մանկաշխարհ) հանապազ հոլովույթով։

Հնաբույր բաձայնական հնչյուններով հորինված օրորից մինչև զարգացման բարձր մակարդակի հասած (որոշակիորեն կազմավորված ըմբռնումներով և աշխարհընկալմամբ ասված) օրորոցայինները, մանկան գովքի ու գորովի երգերը, ինչպես նաև բուն մանկաշխարհի երգերն ու խաղերգերը, ասելուկներն ու հանելուկները. ահա գրեթե այն բոլոր տեսակները, ինչ ստեղծվել է մանուկների համար։ Մշտատև ստեղծագործությունների այս համակարգում երեխաներն աստիճանաբար պասսիվ ունկնդիրների վիճակից փոխարկվում են ժողովրդական ստեղծագործությունների ակտիվ կրողների և եթե դժվար է հստակ նշել այն սահմաններն ու հանգամանքները, որոնցում տեղի է ունեցել այդ անցումը, ապա հայտնի է, որ բանահյուսական ստեղծագործությունները պատմականորեն՝ սերնդափոխանցման ճանապարհով կրած փոփոխություններին առընթեր ձերբազատվել են այն ամենից, ինչ խորթ է մանկան մտքին ու սրտին, այսինքն՝ այդ ստեղծագործությունները թոթափել են այն ամենը, ինչը չի հետաքրքրել մանկանը, այդ ճանապարհով ստանալով մանկան պահանջներին համահունչ ձև և բովանդակություն։

Մանկական բանարվեստի խնդիրներին անդրադառնալիս անհրաժեշտորեն պետք է պարզել, թե ի՞նչ է մանկական բանահյուսությունը, ընդգրկման ի՞նչ սահմաններ ունի, ովքե՞ր են նրա կրողները և նրա տեղը հայ բանահյուսության ընդհանուր համակարգում։

Մանկական բանահյուսություն եզրը հավասարապես կիրառելի է բանավոր խոսքարվեստի այն բոլոր ստեղծագործությունների համար, որոնք մանկական բնույթ ունեն և որոնց կրողները երեխաներն են կամ մեծահասակները, հետևաբար՝ մանկական բանահյուսություն ասելով պետք է հասկանալ այն բոլոր ստեղծագործությունները, որոնք ստեղծում են մեծահասակները երեխաների համար, ինչպես նաև հենց իրենց՝ երեխաների, ստեղծած տարաբնույթ երգերն ու ասույթները։

Մանկական բանահյուսությունը անքակտելիորեն կապված է այն միջավայրին, ուր ծնվում ու հարատևում է ինքը, ուր կազմավորվում են երեխայի աշխարհճանաչողության առաջին սաղմերը՝ իբրև հնտանք շրջապատի, բնության, կենդանական աշխարհի մասին ծնողներից ստացած ամենօրյա պարզունակ, բայց և մարդկայնորեն բարձր ու ազնիվ հաղորդումներին։ Սրանով են պայմանավորված մանկական բանարվեստի հարուստ գանձարանում պահպանված ժողովրդագիտական բազում տվյալներ ու արժեքներ, որոնք սպասում են լուսաբանման։ Ուստի և մանկական բանահյուսությունը պետք է դիտել իբրև երեխայի և մեծահասակների փոխադարձակցման արդյունք։ Այս հանգամանքով է բացատրվում նաև այն անառարկելի նմանությունը, որ հաճախ աչքի է զարնում ընդհանուր և մանկական բանահյուսական ստեղծագործությունների համադրումից։ Այսուհանդերձ, մանկական բանահյուսությունն ունի իր տարբերակման ընդգծված սահմաններն ու ինքնատիպությունը, կատարման ձևի յուրօրինակությունն ու մանկաբնույթ բովանդակությունը։ Այս հանգամանքը ավելի որոշակի արտահայտվում է այն ստեղծագործություններում, որոնք կենցաղավարում են երեխաների միջավայրում և որոնց կրողները մանուկները լինելով, պահպանում են իրենց անխառն նկարագիրը (խաղերգեր, ասելուկներ և այլն)։

Փոքր-ինչ այլ է այն ստեղծագործությունների պատկերը, որոնց կրողները մեծահասակներն են, ուր տարաբնույթ թեմաների հարակցումից զատ, նկատվում է դյուտարոզի սոցիալ-բարոյական ու անձնական մոտիվների, հույզերի հախուռն ներթափանցում։

Մանկական երեթե բոլոր ստեղծագործություններում ակնհայտորեն նկատվում են տարիքային որոշակի սահմանազատումներ. այսպես՝ օրորի, գովքի, գորովի երգերը ասվել են մանկան կյանքի առաջին տարիներին. խաղերգերը, բառախաղերը, ձեռնախաղի երգերը, ասելուկները յուրահատուկ են նախադպրոցական տարիքի երեխաներին, իսկ երդիծական երկխոսական, շարաբարդված երգերը, ինչպես նաև հանելուկները, հանելուկ-խնդիրները շրջառում են արդեն հասուն տարիքի երեխաների շրջանում։

Դժվար չէ նկատել այս թվարկվող խմբավորումներից, որ ստեղծագործությունների թեմատիկան ու գաղափարական բովանդակությունը հետեվողականորեն ընդլայնվում և խորանում է համապատասխան երեխայի տարիքային աճի, մտահորիզոնի լայնացման ու զարգացման։

Փորձենք ըստ տարիքային հատկանիշի ներկայացնել հայ մանկական բանահյուսության տեսակային խմբերն ու նրանց եզրերը։

1. ԳՈՐՈՎԵՐԳԵՐ — այս երգերի կրողները սովորաբար մեծահասակներն են՝ մայրերը, տատիկները, տարեց կանայք։

Ներքին մոտիվային հատկանիշների տարբերակման ճանապարհով երգերը կարելի է խմբավորել ըստ հետևյալ տեսակների.

ա. Օրորոցային (լուրի, դարդար, հայրուր, նաննիկ, նեննի, լայ-լայ) երգեր, որոնք երեխայի վրա ազդելու, քուն բերելու մտահղացման արդյունք են։ Երեխային չար աչքից զերծ պահելու, անվտանգ մեծացնելու մոր մտավախությունը կյանքի է կոչում չարխափան հավատալիքների, ծեսերի ու հմայաբանադրական ասույթների մի ողջ համակարգ, որը համահունչ է օրորոցային երգերին, բայց չի փոխարինում նրանց, չի փոխանցվում մանկական երգարվեստի ընդգավառ, ուստի և հեռու է մանկական երգարվեստ համարվելու միտումից։ Հնարավոր է նաև, որ նախնական օրորոցային երգերը կազմված են եղել մի քանի հմայական ասույթներից, պարզունակ ձայնարկություններից, հանգավոր համաչափ երկտողերից՝ զուգորդված բնության չար ուժերը վանող հմայական շարժումներով (օրորոցի ճոճվելը, ձեռքերի կամ հագուստների թափահարումը), ահաբեկող շեշտադիր կրկներգերով (է.) է.է.է., հայրուր, հայրուր)։

Օրորոցային երգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց զարգացման ճանապարհին կրել են ժանրային էական փոփոխու-

թյուն՝ բանադրանք հմայանքից վերաճելով օրորոցային, պահպանելով հմայական ծանրին հատուկ տարրերը, որոնք, սակայն, լիովին մոռացվում են մանկական երգարվեստում, իբրև եկամուտ և երեխայի հոգուն ու մտքին խորթ տարրեր. այսպես՝

Օրո՜ր, օրո՜ր օրերուդ,
Թևս դեմ բերեմ չարերուդ, է, է, է, է,
Զարխափան չարերդ խափանե,
Աստվածամայր արևդ պահե, է, է, է, է[1]։

կամ՝

Ա՜խ, ի՞նչ անեմ, ի՞մալ անեմ,
Էն չար աչքից հեռու պահեմ...[2]

բ. Հայօրորների երկրորդ խումբը ընդգրկում է այն երգերի շարքը, ուր. մանկիկն է իր շրջապատի իրերով ու «կճատիկ» (փոքրիկ) աշխարհով։ Ջերմությամբ ու սիրով են գովերգվում ոչ միայն երեխան, այլև նրան շրջապատող իրերն ու առարկաները՝

Օրո՜ր, օրո՜ր քուն ունիս,
Պեշիկին մեջը տուն ունիս,
Օսկիե օրրան ունիս,
Մարգարտե յորղան ունիս,
Ճեֆահիրե բարձեր ունիս,
Շար ու շարմաթ շոր ունիս[3]։

Բնությունը, երկնային լուսատուները և կենդանական աշխարհը երգելով՝ մայրը ձգտում է կտրվել իրական կյանքի հոգսերից, ստեղծել հեքիաթային աշխարհի պատրանք իր և մանկիկի համար, երևակայական մի աշխարհ, ուր ամեն ինչ վարդագույն է, ամեն ոք բարի, ազնիվ ու մարդկային։ Ահա նախնական ըմբռնումների և պատկերացումների ողջ համալիրը, որին հաղորդակցվում է երեխան դեռևս օրորոցից։

գ. Երգերի այս խումբը ևս ներկայացնում է անկեղծ և հոգու ջերմությամբ իր հուզաշխարհը բացահայտող մոր մտորումները։ Առաջին հայացքից թվում է, թե պետք է վեր հանվի այն ամենը, ինչ երեխային ընկալելի է, հասկանալի, բայց՝ երգերի այս շարքում մայրը հաճախ է հեռանում այդ սահմաններից՝ մինչև անձնական ու անանձնական վշտի, հոգսերի արծարծման մակարդակ։

Հայօրորների մի զգալի մասը ստեղծվել է ընդհանուր քնարական մոտիվների հարակցումից՝ օրորոցային կրկներգի հավելմամբ։ Կառուցվածքային առումով, կրկներգերը նպաստում են տվյալ երգի վերափոխմանը օրորոցայինի, միայն թե կրկներգերի հավելմամբ երգը նոր թեմա և երանգավորում է ստանում։ Օրորոցը, շրջապատի անդորրն ու հոգեթով մեղեդին, միայնությունը նպաստում են մոր տրամադրության բացահայտմանը, և նա երգում է իր հույզերին ազատություն տված. այս ճանապարհով էլ օրորոցային են ներթափանցել անհավասար, անսեր ամուսնության, օտարության գնացած սիրեցյալի, հարստահարիչների բռնությունների մոտիվները. այսպես՝

Օրո՜ր, օրո՜ր,
Սև հրլեր էն օր,

---

1 Ռ. Հ. Գրիգորյան, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան 1970, էջ 55։

2 Նույն տեղում, էջ 45։

3 Նույն տեղում, էջ 13։

Ջառնի ես քո խոր,
Ջրլնի սգվոր...[4]

կամ՝

Օրո՜ր, օրո՜ր,
Արև կուծագի, ալվա կումարի,
Սրտիս կեսն է տարած,
Կեսը կուցավի,
Ճիկերս ի փորուս քաշած,
Քեպապի տեղ ոլրած,
Տիգեկ, տիդեկ փայ ըրած.
Օրո՜ր, օրո՜ր...[5]։

Կրկներգերը նման դեպքերում դիտվում են իբրև կառուցվածքային յուրահատկություն, առանց որի որոշ երգեր կարող են կորցնել իրենց նպատակն ու գործառույթը։

դ. Սանկախաղաց, գովքի, խայտանքի ու լոգանքի երգեր։ Երեխայի տարիքային աճի փոփոխության հետ փոխվում է նաև մանկական օրորների, որոշ երգերի որակը, կատարման ձևն ու մեղեդին։ Քնաբեր ու թմրեցնող երգերին փոխարինելու են գալիս հանգավոր, համաչափ տողերով կայտառ տրամադրությամբ ասված գորովի, խայտանքի ու բերկրանքի երգերը, որոնց կատարման ձևը ևս տարբեր է նախորդից. ձեռքի վրա երեխային վեր-վար թռցնելով, գովերգում են նրա բարեմասնությունները՝

Դե՛, պարես, պարես ըրախաս,
Լոխին բըրբբար էս ըրախաս,
Դե՛, կաղնի բոյդ տեսնամ,
Մըծացի սոյդ տեսնամ,
Նշանիդ կանանչ կապեմ,
Հըրսանիքիդ կարմիր կապեմ,
Դե՛, պարես, պարես ըրախաս,
Լոխին բըրբբար էս ըրախաս...[6]

կամ՝

Դե՛, թռի՛, թռի՛ թռցնեմ,
Սև հավու միս կերցնեմ...[7]

Նմանատիպ երգերն ասվում են երեխային աշխուժացնելու, առույգ ու զվարթ տրամադրություն ներարկելու նպատակով։ Այս երգերում հոգեթով ու քնարական, օրոր, լուրի կրկներգերը փոխարինվում են «թռի՛, թռի՛. դա՛ն դա՛ն. պարի՛ն, պարի՛ն» ռեչիտատիվ բնույթի բառերով։ Սրանք բացառիկ դեր են խաղում նաև այն տեսակետից, որ կցվելով այս կամ այն երգին, հիմնավորապես փոխում են նրա բնույթը և կիրառությունը։

Նույն կենսահաստատ տրամադրությունը, սակայն, կատարման այլ ձևով առկա է լոգանքի երգաշարքում, ուր երգերը կրում են նաև վարժանքի ու մարմնակրթանքի գործառույթ. այսպես՝

Էրկան վղիկ,
Էրկան վղիկ*,
Թափ տու ցավիկ,
Շալկե՛ մսիկ...[8]

---

4 Նույն տեղում, էջ 94։
5 Նույն տեղում, էջ 65։
6 Նույն տեղում, էջ 160։
7 Նույն տեղում, էջ 127։
* Ցուրաքանչյուր տողից հետո ձգում են երեխայի վիզը։
8 Նույն տեղում, էջ 180։

2. ԽԱՂԵՐԳԵՐ — Հայ մանկական բանահյուսության հարուստ և հետաքրքիր բաժիններից է։ Կատարման յուրօրինակությունն ու կառուցվածքի ինքնահատուկ նկարագիրը նպաստում են այս բաժնի երգերի ելքերի հստակ սահմանմանը։

Մանկական բանահյուսության այս տեսակը լայն տարածում ունի· փոքր-ինչ ինքնուրույնություն ձեռք բերած երեխաների շրջանում։ Երգերն ունեն որոշակի ուղղվածություն, հետևաբար և նրանց դասդասումը կատարվում է համապատասխան նմանատիպ խաղերի.

ա. Ձեռնախաղի երգեր — գյուղաշխարհում խաղալիքների բացակայության պայմաններում մանուկը հնարամտությամբ ձեռքերն է դարձնում խաղալիք. մատների վրա երգի խոսքերը վանկարկելով ասում են.

Հայրը՝ բութմատ,
Ոչխար մը գնեց,
Մայրը ցուցամատ
Ջատիկին մորթեց,
Տղան՝ միջամատ
Մորթեց ու քերթեց,
Քույրը՝ մատնեմատ
Տապկեց ու եփեց,
Փոքրիկ ճկույթն ալ
Նեմնամ ծամեց...[9]

բ. Հաշվերգեր — մանկական խաղերի ժամանակ խաղն սկսելու իրավունքը վիճարկելու նպատակով ասված ռիթմիկ, հանգավոր, զվարճախոսական երգեր ու ասույթներ են։ Հաշվերգը ասվում է շրջանաձև կանգնած երեխաների միջավայրում. ում վրա ընկնում է ասույթի վերջին վանկը, նա շրջանից դուրս է գալիս։ Շրջանում կանգնած մինչև վերջին երեխան այս կերրպ դուրս է գալիս, իսկ վերջինը նվաճում է խաղը սկսելու իրավունքը.

Տիտոխի՛կ, տիտմանոխիկ,
Ջուռնա թոխիկ,
Էպե գաթեն, կուլիջա,
Եղ լե վրեն պղպջա,
Ուտե իդա, խմե իդա,
Հազնի իդա, էլնի իդա...[10]

Հաշվերգերի հիմնական նպատակը հաշիվն է՝ զուգորդված հանգավոր բառերին, երբեմն նաև իմաստազուրկ բառ-կապակցություններին։ Յուրաքանչյուր ռիթմիկ շեղում, խախտում նկատելի է դարձնում հաշվերգի անճշտությունը, որի հետևանքով խաթարվում է խաղի ընթացքը։

Վիճակահանության հիմնական նպատակին զուգահեռ հաշվերգերը նաև հաշվելն ու թվարկումը մարզող վարժություններ են։

գ. Խաղերգեր բաժնում իրենց բառախաղային, խոսքախաղային բնույթով՝ հետաքրքիր են ծաղրերգ, կսմիթերգ տեսակները։ Կիրառվում են խաղերի ժամանակ միմյանց երգիծելու, ծաղրելու համար։ Հաճախ երգիծանքը արտահայտվում է անունների աղավաղմամբ, շրջասելուկներով, նաև արտաքինի զավեշտական նկարագրով, իսկ երբեմն՝ նաև առանց որոշակի օբյեկտի և նպատակադրված միտումի, սոսկ ժամանցի ուրախ տրամադրության համար։ Խաղերի ժամանակ երեխաները շատ են դիմում կսմիթների՝ նպա-

9 Նույն տեղում, էջ 204։
10 Նույն տեղում, էջ 191։

տակադրված խայթոցային բանաձևերի ու ասույթների, դիմացինին ծիծաղելի վիճակի մեջ դնելու, ինքնասիրությունը կսմթելու նպատակով։ Այսպես՝

Վանես, Վանես,
Հա՛վ, հա՛վ անես,
Ջափարի տակին ճուտեր հանես,
Մինը կոխեմ,
Վա՛յ, վա՛յ անես[11]...

Նամ՝

Գև՛ի, Գև՛ի, գև գցեմ,
Ոտնաց բռնեմ,
Դեն գցեմ...[12]

Մանկաշխարհը լի է վեճերով ու անվերջ բորբոքվող դրույցներով, որոնց ընթացքում հակադիր խմբերը փորձում են ծաղրել միմյանց, հանպատրաստի հորինում են շրջասելուկներ, ծաղրանուններով ու խեղված ածականներով կոչում իրար՝ Գևի-մնվի, Խաչիկ-պաչիկ, Մկրտիչ-Կոտրած կթիչ և այլն։ Հանգավոր այս ասույթները առույգ և զվարթ տրամադրություն ստեղծելու հետ զարգացնում են նաև երեխաների արագ մտածելու և ճիշտ կողմնորոշվելու ունակությունը։ Նման ասույթների արմատները թաքնված են և մեծահասակների առօրյայում։ Միմյանց ծաղրանուններով կոչելու սովորությունը մեծահասակների շրջանում պահպանված է մինչև օրերս։ Ի՞նչ արտաքին և ներքին գործոններ են նպաստում նման զավեշտական բնութագրումներին, ո՞րն է նրանց հասարակական հիմքը՝ ա. հնում որևէ առիթով տրված ժառանգաբար, սերնդեսերունդ ծաղրանունները, բ. արտաքին նկարագրի որևէ թերություն, գ. բնավորության ընդգծված թուլություն կամ համառություն, դ. կյանքի որևէ արտառոց միջադեպ, պատահար։

Ծաղրանունների արտահայտչականությունն ու գունեղությունը համահունչ է մանուկների էությանը, իսկ կատարման ձևն ու միջավայրը՝ մատչելի ու տրամադրող։ Մանկական բանահյուսության այս տեսակները (ծաղրախոսուկ, ծաղրասելուկ, կսմիթերգներ) ունեն երգային բանահյուսության հարուստ ավանդույթներ, որոնք էլ նպաստել են մանուկների հոգեբանական փոխակերպումների երկարատև գործընթացին։

3. ՍՏԱՎԱՐԺԱԿԱՆ, խոսքավարժական, արագախոսական մարզանքին է վերաբերում մանկական բանարվեստի ստեղծագործությունների մի ստվար բաժին, որը կարելի է խմբավորել այսպես՝

ա. հանելուկներ,
բ. շուտասելուկներ,
գ. բառախաղ—ասելուկներ։

Այս խմբում ընդգրկված տեսակները կատարման ձևի և բովանդակության մատչելիության շնորհիվ, ինչպես նաև մանկան հոգեհարազատության պատճառով դյուրընկալելի են եղել երեխաներին և հեշտությամբ ժառանգվել են մեծերից։

ա. Հանելուկի հարցադրման և լուծման՝ ճշգրիտ պատասխանի հայտնաբերման ընթացքը դիպչում է մանկան պատվախնդրությանը, միտք է շարժում, և նա ձգտում է հնարավորին չափ շատ արագ և անսխալ ելնել այդ վիճակից։ Հանելուկը հարցասիրություն և դիտողունակություն է զարգացնում, խորացնում է դիտելիքները և ընդլայնում մտահորիզոնը։ Երեխայի մեջ անմեղ նախանձախնդրության բորբոքումը նպաստում է առաջինը և անսխալը լինելու ձգտման զարդացմանը։

---

11 Նույն տեղում, էջ 231։
12 Նույն տեղում, էջ 280։

Հատկապես հետաքրքիր են հարց ու պատասխանի սկզբունքով կազմված թվաբանական հանելուկները, ուր որոշակի տարիքի երեխաները ցուցաբերում են արագ կռահելու, տրամաբանորեն պատասխանելու կարողություն։

Այս խմբին են պատկանում նաև անհեթեթ հարց ու պատասխաններ պարունակող հանելուկները, որոնց միջոցով, ստուգվում է երեխայի ուշիմությունն ու սթափ մտածելու, շրջահայաց լինելու կարողությունը[13]. այսպես՝

բ. Շուտասելուկներ — սակավ հանդիպող բառակապակցություններ, դժվարահունչ երկտողեր, քառյակներ, երբեմն նաև ավելի ընդարձակ ստեղծագործություններ են, դարձյալ ձևի և կատարման մատչելիության շնորհիվ մեծահասակներից երեխաներին անցած և նրանց միջավայրում ակտիվ կենցաղավարմամբ ապրող բանահյուսական տեսակ։ Հնչյունային խայտաբղետությունը, լեզվական խրթնաբանությունները շուտասելուկներին հաղորդում են խաղի բնույթ և թույլ տալիս դրանք դասելու խաղերգերի շարքը։

Մանկական բանահյուսության յուրօրինակությունը նրա կրողների տարիքային սահմանազատման մեջ է, ինչպես նաև նրա համալրումը ժողովրդական բանարվեստի այլևայլ ստեղծագործություններով, այսինքն՝ այն ևս, ինչպես ընդհանրապես ողջ ժողովրդական բանարվեստը, ապրում է անընդհատ ըոյատևող բանահյուսական մի գործընթաց, ուր ի հաշիվ մեկի՝ հարստանում, համալրվում է բանահյուսական մի այլ տեսակ։ Այս երևույթի (փոխանցման, փոխհարստացման) հետևանք է մանկական բանահյուսության բազմաշերտությունը։ Ահա այդպիսի բնագավառներ են բնության ու երկնային լուսատուներին նվիրված մանկական ծիսական երգերը։

4. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

Այս երգերը իրենց գերակշիռ մեծամասնությամբ որոշակի ուղղվածություն ունեն։ Դրանք նվիրված են արևին, աստղերին, լուսնին, բնության երևույթներին ու տարվա եղանակներին, կենդանական աշխարհին՝ շանը, կատվին, աղվեսին, թռչուններին՝ արծվին, ուրուրին, բազեին, արագիլին և այլն։

Այսպես՝

Անձրև՛, անձրև՛,
Ցած արի,
Բուսըցրու ցորեն ու գարի[14]։

կամ՝

Արտուտիկ, նախշուն տոտիկ,
Իջնեն կալերն գողտիկ-մողտիկ,
Ուտեն կուտիկ,
Թռնեն, էթան առվու եզրիկ...[15]

5. ՄԱՆԿԱԿԱՆ ԾԱՂՐԵՐԳԵՐ—մանկական բանարվեստի այս տեսակը լայն տարածում ունի որոշակի տարիքի երեխաների շրջանում, երբ նրանք իրենց հանապազօրյա խաղերի և ժամանցների ընթացքում ընդօրինակում և մեծահասակներից վերցնում են այն ամենը, ինչին հասու է նրանց միտքն ու հոգին, ինչը դյուրընկալելի է ու հասկանալի, կիրառելի է իրենց խաղերում։

---

13 Տե՛ս Սևանի ավազանի բանահյուսությունը. ձեռագիր ժողովածու (Ռ. Հ. Գրիգորյանի անձնական արխիվ)։

14 Ռ. Հ. Գ ր ի գ ո ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 300։

15 Նույն տեղում, էջ 303։

Ահա այս ճանապարհով էլ մանկական երգարվեստ է ներթափանցում կոնկրետություն և որոշակիություն. երգերի նյութ են դառնում շրջապատն ու բնությունը, մասնակի ծեսերի հետ կապված որոշ հանգամանքներ ու պարագաներ (ճըճեռնակ, նուրի և այլն)։

Մանկական ծիսերգերը, որպես այդպիսիք գոյություն չունեն։ Երեխաները, սոսկ կրողներն են այն երգերի, որոնք ասել են մեծահասակները՝ ծեսերի ժամանակ։ Երեխաները «ճըճեռնակները» պտտեցնելով շրջել են տնետուն, երգել, ծիսական այդ հոգերը՝ նվերներ ստանալու ակնկալությամբ։ Ծեսերի մոռացումը մեծահասակների շրջանում իր հետ բերել է որոշակի սովորությունների (շրջաշրջություններ, նվիրատվություն) նահանջ և մոռացում։

Նման ծիսերգերի գրառում մեր կողմից վերջին անգամ կատարվել է 1978 թ.։ Օրինակ՝

Ճը՜ռ, ճը՜ռ ճռճռակ,
Աստծու հալալ պռպռակ,
Ընկերս ելել ա ծառը,
Հավը ելել ա թառը,
Իմ կարմիր հավկիթը բերեք,
Ջիր ու չամիչ ինձ տվեք,
Ուտենք, խմենք քեֆ անենք[16]։

6. ՇԱՐԱԲԱՐԴԱՆ (շեղջակուտակ) ԵՐԳԵՐ — հեքիաթային նախերգերի այն խումբն է, որն ասվում է պատկերների և խոսքերի ընդգծված հարասացությամբ, դույզն—ինչ չշեղվելով սյուժեից։ Այս ստեղծագործությունները առանձնանում են իրենց սրամիտ, զվարճալի ընթացքով, հարուստ տողակրկնություններով, բառակրկնություններով, որոնք նկարագրի ու գործողության գերաճ հաղորդելով երգին, այն հասցնում են պարզեցման ու ավարտի։ Ահա մի օրինակ՝

Հեքիաթ, հեքիաթ պապս,
Կապույտ քուռակը տակս,
. . . . . .
Ցորեն տանեմ ջաղցին տամ,
Ջաղաց ընձի ալյուր տա,
Ալյուր տանեմ ջրին տամ,
Ջուրն ընձի խմոր տա...[17]
. . . . . .

Եթե մանկական բանահյուսության այս կամ այն տեսակի համար կարելի է որոշակի սահմանել ասացողներ և կրողներ հասկացությունները, ապա նույնը չի կարելի ասել հեքիաթների համար։ Հեքիաթը ասվում է ընդարձակ ունկնդրավայրում, ուր ներկա են լինում երեխաները։ Նրանք լսում են, կարող են նաև հետագայում վերապատմել, սակայն այդ անում են որոշակի ընտրությամբ՝ իրենց հետաքրքրող հեքիաթները կամ վերջիններիս առանձին հատվածներ։

Ինչպես վկայում են բազմաթիվ բանահյուսական հավաքածուները, մանկական հեքիաթ, որպես այդպիսին, չի գրանցվել ո՛չ մի բանահավաքի կողմից և ո՛չ մի ժամանակ։ Միայն հեքիաթի բովանդակությունն է հնարավորություն ընձեռում որոշարկելու հեքիաթի բնույթը՝ մանկական է այն, թե ոչ։ Շատ հաճախ հեքիաթը հավասարապես պատմվում է և մեծահասակների շրջանում։ Ուստի հեքիաթը պետք է դիտել և ուսումնասիրել հեքիաթ-

16 Սևանի ավազանի...։
17 Ռ. Հ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 264։

ների ընդհանուր համակարգում, այս տեսակի ողջ ժառանգությունը՝ իր տարբերակային բազմազանությամբ ու հարստությամբ։

7. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ այս խմբավորումները թերի կլինեն, եթե առանձին բաժնով չներկայացվի մանկական խոսվածքի ծավալուն և հետաքրքիր բնագավառը, որին հայ բանագիտության մեջ առաջինը անդրադարձել է Հ. Աճառյանը[18], իսկ այնուհետև՝ 1970 թ., մանկական խոսվածքի բառարանը, որ համալրված է նոր գրառումներով և հրատարակվում է «Հայ ժողովրդական օրորոցայիններ և մանկական երգեր» ժողովածուում։ Բառարանում ամփոփված նյութերը վերաբերում են վաղ մանկության տարիքին և նպաստում մանկան նկարագրի ամբողջացմանը։ Բաձայնական հնչյուններից մինչև պատկերի կամ երևույթի դիտակցման հետևանքով արտաբերված, բայց և տարիքին բնորոշ լեզվական աղավաղումներով արտասանված բառերն ու հնչյունները մանկան աստիճանական զարգացման խոսուն վկաներն են։ Մանկական խոսվածքը ուրույն և հետաքրքիր բնագավառ է, ուր արձանագրվում է մարդ-արարածի առաջին թոթովանքը։

8. ԾԱԾԿԱՎԵԶՈՒՆ կիրառվում է առօրյա խաղերի ու գաղտնի խոսակցությունների ժամանակ։ Կրողները երեխաներն են, կառուցվածքը՝ վանկերի տրոհմամբ և յուրաքանչյուր վանկի վերջում որևէ բաղաձայնի հավելմամբ կազմված բառերով նախադասություններ են։ Կատարում են ռիթմիկ ու աշխույժ տրամադրությամբ, հնարավորին չափ արագ, որպեսզի ներկաները չկարողանան որսալ գաղտնիքը և հասկանալ խոսակցության իմաստը։

Մանկական բանահյուսության ոչ մի տեսակն այսքան որոշակիորեն իր կրողն ու ասացողն չունի, որքան մանկական թոթովանքն ու ծածկալեզուն։ Այն նաև հարատևող է ու կենսունակ։

Ինչպես կարելի է նկատել մանկական բանահյուսության տարաբնույթ տեսակների սոսկ թվարկումից, այդ ստեղծագործությունները ընդգրկում են մանկան կյանքի տարբեր փուլերը, համապատասխանաբար փոփոխվելով և զարգանալով՝ պարզից դեպի բարդ՝ թե՛ թեմատիկայով և թե՛ բանաստեղծական կառուցվածքով։

Հայ մանկական բանահյուսությունը հանգամանալից ու լայնահուն ուսումնասիրության չի արժանացել, սակայն գիտական հետազոտման համար ստեղծված է կայուն և հարուստ բազա՝ հավաքված ու գիտական համակարգման է ենթարկված ավելի քան մեկ ու կես հարյուրամյակում կուտակված բանահյուսական նյութ, որը կազմում է շուրջ 1700 միավոր, ուր ներառված են նաև վերջին տասնամյակներում մեր կատարած գրառումները։

Ըստ հավաքված նյութերի Հայ մանկական բանահյուսության ժանրային համակարգը կարելի է ներկայացնել այսպես՝

1. ԳՈՐՈՎԵՐԳՆԻ
   ա. Հայorոrներ
   բ. Մանկախաղաց և գովքի երգեր
   գ. Խայտանքի ու լոգանքի երգեր
2. ԽԱՂԵՐԳԵՐ
   ա. Ձեռնախաղի երգեր
   բ. Հաշվերգեր
   գ. Ծաղրերգեր, կսմիթերգեր
3. ՄՏԱՎԱՐԱԿԱՆ, ԽՈՍՔԱՎԱՐԱԿԱՆ, ԱՐԱԳԱԽՈՍԱԿԱՆ ԱՍԵԼՈՒԿՆԵՐ
   ա. Հանելուկներ (նաև թվաբանական խնդիր հանելուկներ)
   բ. Բառախաղ, ասելուկ, շուտասելուկ
4. ԲՆՈՒԹՅԱՆ, ԿԵՆԴԱՆԱԿԱՆ աշխարհին նվիրված երգեր

---

18 Հ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան (էմինյան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913)։

5. ՄԱՆԿԱԿԱՆ ԾԻՍԵՐԳԵՐ
6. ՇԱՐԱԲԱՐԴՎԱԾ *երգեր*
7. ՄԱՆԿԱԿԱՆ ԽՈՍՎԱԾՔ
8. ՄԱՆԿԱԿԱՆ ԾԱԾԿԱԼԵԶՈՒ

Հայ մանկական բանարվեստի նշված բոլոր տեսակները պատմական երկարատև գործընթացի արդյունք են, ենթարկվել են բնականոն փոփոխությունների, հղկման ու սրբագրման։ Այդ ընթացքը նպաստել է նրանց կենսունակությանն ու կիրառական որոշակի ուղղվածությանը։ Ուստի մանկական բանահյուսության ուսումնասիրությունը պետք է սկսել երկու հույժ կարևոր գործոնների բացահայտմամբ՝ առաջինը այն միջավայրն է, ուր ծնվում և հոգևոր սննդի նախնական պաշարն է կուտակում երեխան։ Ծնողներից և հարազատներից հանապազօրյա քնքշանքին ու փաղաքշանքին զուգակցված առատ ինֆորմացիաները շրջապատի, բնության մասին իրենց անջնջելի հետքն են թողնում երեխայի նկարագրի, հետևաբար և նրա խաղերի, բանավոր ստեղծագործությունների վրա։ Մանկական բանարվեստի հետազոտումը, առանց ուսումնասիրելու այն միջավայրը, ուր իր արմատներն է նետելու երեխան, թերի և միակողմանի կլինի։ Երկրորդ՝ մեծահասակներ-երեխաներ փոխառնչակցության բացահայտումը և նրա ներգործության նյութերի վերհանումը կարևոր նախապայման է մանկական բանահյուսության հարատևման ու հարստացման գործընթացում։

Մանկական բանահյուսության տարբեր տեսակների ճակատագիրը նույնը չէ։ Նրանցից և ոչ մեկը լիարյուն կենցաղավարում չի ապրում, իսկ որոշ տեսակներ իսպառ մոռացվել են։ Անհետացել են բազմաթիվ խաղեր՝ իրենց ավանդական երգային հատվածներով։

Կյանքի նոր պայմանների թելադրանքով ընդհանուր բանահյուսության համակարգում սկիզբ առած և արագորեն առաջ ընթացող բանահյուսական ավանդույթների պասիվացման և աստիճանական մոռացման ընթացքից զերծ չի մնում նաև մանկական բանահյուսությունը, այն օրավուր նկատելիորեն կորցնում է շատ էական կողմեր՝ ներառնելով անշուշտ նաև նորը, բայց ավելի հաճախ անդառնալիորեն կորցնելով հինը, ավանդականն ու անկրկնելին։

ВИДЫ И ТЕРМИНЫ АРМЯНСКОГО ДЕТСКОГО ФОЛЬКЛОРА

Р. А. ГРИГОРЯН

Резюме

Армянский детский фольклор богат и разнообразен. Свод произведений детского устного творчества был опубликован в 1970 г. и на основании этого материала делается попытка определения состава и терминологии армянского детского фольклора.

Под термином «детский фольклор» подразумеваются как произведения, специально созданные для детей (колыбельные, прибаутки и т. д.), так и те, которые со временем потеряли своё серьёзное значение в жизни взрослых и перешли к детям (заговоры, заклинания, перевертыши и т. д.). Своим складом, ритмикой и художественными средствами они синхронны детской психологии и их миру, поэтому они так легко были заимствованы ими.

Под детским фольклором подразумеваются также произведения, авторы которых сами дети (считалки, дразнилки, издевки, каламбуры и т. д.)